ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամոր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Մեծամոր, 060656505 info@mecamor.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

31 հունվարի 2025 թվականի N 6-Ա

ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 31-Ի ԹԻՎ 2 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ և 62-րդ հոդվածներով,

ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1.Հաստատել Մեծամոր համայնքի ավագանու 2025 թվականի հունվարի 31-ի թիվ 2 արտահերթ նիստի օրակարգը՝ համաձայն հավելվածի:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ -17 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՎԱՀՐԱՄ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԷԴԳԱՐ

ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ՌԱԶՄԻԿ

ԱՀԱՐՈՆՅԱՆ ՍԵՐԳԵՅ

ԱՍԱՏՐՅԱՆ ԷԴԳԱՐ

ԲԱՐԵՂԱՄՅԱՆ ԱՇՈՏ

ԴՈԲՈՅԱՆ ՏԱՏՅԱՆԱ

ԵՐՎԱՆԴՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ

ԶԱՔԱՐՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԳԱՅԱՆԵ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱՀԱՊԵՏ

ՄԱԿՅԱՆ ՄԱՐԳԱՐԻՏԱ

ՄԱՑԱԿՅԱՆ ՏՈՆԻԿ

ՄԽԻԹԱՐՅԱՆ ԱՐԱՄԱՅԻՍ

ՇՄԱՎՈՆՅԱՆ ԱՐՄԵՆ

ՍԱՐԳՍՅԱՆ ՎԱՐԴԳԵՍ

ՍՆՋՈՅԱՆ ԱՐՏՅՈՄ

Համայնքի ղեկավար՝ **Վ. ԽԱՉԱՏՐՅԱՆ**

Հավելված
Արմավիրի մարզի Մեծամոր
համայնքի ավագանու 2025 թվականի
հունվարի 31-ի N 6-Ա որոշման

ՕՐԱԿԱՐԳ

ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 31-Ի ԹԻՎ 2 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ «ՓՇԱՏԱՎԱՆ ԳՅՈՒՂԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ «ՓՇԱՏԱՎԱՆ ԳՅՈՒՂԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ 1,09369 ՀԱ ՀՈՂԱՄԱՍԸ ՆՎԻՐԱԲԵՐՈՒԹՅԱՄԲ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 28-Ի N 43-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՓՇԱՏԱՎԱՆ ԳՅՈՒՂԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԵՂԱԿԱՆ ԲԱՑ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՂ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՓՇԱՏԱՎԱՆ ԳՅՈՒՂՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ 0,001874 ՀԱ, 0,003999 ՀԱ ԵՎ 0,0201 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՆԵՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆԸ ՆՎԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Աշխատակազմի քարտուղար Մ. Հովհաննիսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամոր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Մեծամոր, 060656505 info@mecamor.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

31 հունվարի 2025 թվականի N 7-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ «ՓՇԱՏԱՎԱՆ ԳՅՈՒՂԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 15-րդ կետով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 5-րդ կետով և հիմք ընդունելով Մեծամոր համայնքի ղեկավարի առաջարկությունը

ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1.Ստեղծել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի «Փշատավան գյուղի մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն»:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ -17 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՎԱՀՐԱՄ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԷԴԳԱՐ

ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ՌԱԶՄԻԿ

ԱՀԱՐՈՆՅԱՆ ՍԵՐԳԵՅ

ԱՍԱՏՐՅԱՆ ԷԴԳԱՐ

ԲԱՐԵՂԱՄՅԱՆ ԱՇՈՏ

ԴՈԲՈՅԱՆ ՏԱՏՅԱՆԱ

ԵՐՎԱՆԴՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ

ԶԱՔԱՐՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԳԱՅԱՆԵ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱՀԱՊԵՏ

ՄԱԿՅԱՆ ՄԱՐԳԱՐԻՏԱ

ՄԱՑԱԿՅԱՆ ՏՈՆԻԿ

ՄԽԻԹԱՐՅԱՆ ԱՐԱՄԱՅԻՍ

ՇՄԱՎՈՆՅԱՆ ԱՐՄԵՆ

ՍԱՐԳՍՅԱՆ ՎԱՐԴԳԵՍ

ՍՆՋՈՅԱՆ ԱՐՏՅՈՄ

Համայնքի ղեկավար՝ **Վ. ԽԱՉԱՏՐՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամոր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Մեծամոր, 060656505 info@mecamor.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

31 հունվարի 2025 թվականի N 8–Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ «ՓՇԱՏԱՎԱՆ ԳՅՈՒՂԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 5-րդ մասով և հիմք ընդունելով Մեծամոր համայնքի ղեկավարի առաջարկությունը

ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի «Փշատավան գյուղի մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը՝ համաձայն հավելվածի:

2. Համայնքի ղեկավարին՝ սույն որոշման 1-ին կետով հաստատված կանոնադրությունը օրենքով սահմանված կարգով ներկայացնել Հայաստանի Հանրապետության Արդարադատության նախարարության աշխատակազմի իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալություն՝ պետական գրանցման:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ -17 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՎԱՀՐԱՄ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԷԴԳԱՐ

ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ՌԱԶՄԻԿ

ԱՀԱՐՈՆՅԱՆ ՍԵՐԳԵՅ

ԱՍԱՏՐՅԱՆ ԷԴԳԱՐ

ԲԱՐԵՂԱՄՅԱՆ ԱՇՈՏ

ԴՈԲՈՅԱՆ ՏԱՏՅԱՆԱ

ԵՐՎԱՆԴՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ

ԶԱՔԱՐՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԳԱՅԱՆԵ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱՀԱՊԵՏ

ՄԱԿՅԱՆ ՄԱՐԳԱՐԻՏԱ

ՄԱՅԱԿՅԱՆ ՏՈՆԻԿ

ՄԽԻԹԱՐՅԱՆ ԱՐԱՄԱՅԻՍ

ՇՄԱՎՈՆՅԱՆ ԱՐՄԵՆ

ՍԱՐԳՍՅԱՆ ՎԱՐԴԳԵՍ

ՍՆՋՈՅԱՆ ԱՐՏՅՈՄ

Համայնքի ղեկավար՝ **Վ. ԽԱՉԱՏՐՅԱՆ**

Հավելված 1
ՀՀ Արմավիրի մարզի Մեծամոր
համայնքի ավագանու 2025 թվականի
հունվարի 31-ի N 8-Ա որոշման

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ «ՓՇԱՏԱՎԱՆ ԳՅՈՒՂԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1 Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի «Փշատավան գյուղի մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը (այսուհետ՝ Հաստատություն) շահույթ ստանալու նպատակ չհետապնդող, իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող ուսումնական հաստատություն է (այսուհետ՝ Հաստատություն), որը համապատասխան լիցենզիայի հիման վրա իրականացնում է նախադպրոցական կրթական առնվազն մեկ տեսակի ծրագիր և (կամ) նախադպրոցական ծառայություններ:

1.2 Հաստատության հիմնադիրը Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամոր համայնքն է՝ ի դեմս համայնքի ավագանու (այսուհետ՝ Հիմնադիր), իսկ Հիմնադրի կողմից, որպես համայնքային հաստատության կառավարումն իրականացնող լիազորված մարմին հանդիսանում է Մեծամոր համայնքի ղեկավարը (այսուհետ՝ Համայնքի ղեկավար):

1.3 Հաստատությունն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, «Կրթության մասին», «Նախադպրոցական կրթության մասին», «Հանրակրթության մասին», «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին», «Երեխայի իրավունքների մասին» և «Տեղական ինքն

ակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներով, այլ իրավական ակտերով և սույն կանոնադրությամբ (այսուհետ՝ կանոնադրություն):

1.4 Հաստատությունը ստեղծված է համարվում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով պետական գրանցման պահից՝ առանց ժամկետային սահմանափակման:

1.5 Հաստատության գտնվելու վայրն է՝ Արմավիրի մարզ, Մեծամոր համայնք, գյուղ Փշատավան 1 փ. 40/5 շ.:

1.6. Հաստատությունը, որպես սեփականություն, ունի առանձնացված գույք և իր պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով: Հաստատությունն իր անունից կարող է ձեռք բերել ու իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող:

1.7 Հաստատության անվանումն է՝

1) հայերեն լրիվ՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի «Փշատավան գյուղի մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն.

2) հայերեն կրճատ՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի «Փշատավան գյուղի մանկապարտեզ» ՀՈԱԿ.

3) ռուսերեն լրիվ՝ «Детский сад села Пшатаван Мецаморской общины Армавирской области Республики Армения» общинная не коммерческая организация.

4) ռուսերեն կրճատ՝ ОНКО «Детский сад села Пшатаван Мецаморской общины Армавирской области Республики Армения».

5) անգլերեն լրիվ՝ «Kindergarten Pshatavan village of Metsamor community Armavir region Republic of Armenia» community non-commerical organization.

6) անգլերեն կրճատ՝ «Kindergarten Pshatavan village of Metsamor community Armavir region Republic of Armenia» CNCO:

1.8. Հաստատությունը կարող է ունենալ Հայաստանի Հանրապետության զինանշանի պատկերով և իր՝ հայերեն անվանմամբ կլոր կնիք, ձևաթղթեր, խորհրդանիշ և այլ անհատականացման միջոցներ: Կնիքը, ձևաթղթերը, խորհրդանիշը և այլ անհատականացման միջոցներ ձևավորելիս, անհրաժեշտության դեպքում, հայերենին կարող են զուգակցվել այլ լեզուներ:

1.9. Հաստատությունն ունի պաշտոնական կայք, որտեղ հրապարակվում են հաստատության նախահաշիվը, ֆինանսական (ծախսերի) հաշվետվությունները, հաստիքացուցակը, թափուր աշխատատեղերը, հայտարարությունները:

1.10. Հաստատությունն ունի ինքնուրույն հաշվեկշիռ և բանկային հաշիվ:

1.11. Հաստատությունն այլ կազմակերպության հիմնադիր կամ մասնակից կարող է հանդիսանալ միայն հիմնադրի որոշմամբ:

1.12. Հաստատությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կարող է համագործակցել օտարերկրյա կրթական հաստատությունների և կազմակերպությունների հետ:

1.13. Հաստատությունում չեն թույլատրվում քաղաքական կամ կրոնական կազմակերպությունների ստեղծումն ու գործունեությունը:

2. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

2.1. Հաստատության գործունեության առարկան յուրաքանչյուր սանի կրթության կազմակերպումն է նախադպրոցական կրթական ծրագրեր իրականացնելու միջոցով:

2.2. Հաստատության գործունեության նպատակը յուրաքանչյուր սանի, այդ թվում՝ կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող, զարգացման առանձնահատկություններին համապատասխան կրթական գործընթացին առավելագույն մասնակցության և նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշչով սահմանված արդյունքների ապահովումն է:

2.3. Հաստատության կրթական գործունեությունն իրականացվում է ի շահ անհատի, հասարակության և պետության:

2.4. Հաստատությունը, համագործակցելով համայնքի և ընտանիքի հետ, ապահովում է հաստատությունում ընդգրկված սաների ներդաշնակ զարգացումն ու դաստիարակությունը, առողջության ամրապնդումն ու խնամքը, մայրենի լեզվով հաղորդակցվելու և դրա հիմքի վրա օտար լեզուների տիրապետման նախադրյալները, հաշվելու տարրական կարողությունների զարգացումը, վարվեցողության տարրական կանոններին, հայրենի բնության և բնապահպանության, պատմության և ազգային մշակույթի տարրերին ծանոթացումը, երեխայի մտավոր, բարոյական, գեղագիտական և ֆիզիկական զարգացման հիմքերի ստեղծումը, հայրենիքի նկատմամբ սիրո և նվիրվածության զգացման ձևավորումը, աշխատանքային տարրական կարողությունների և հմտությունների ծանոթացումը, զարգացման շեղումների կանխարգելումն ու շտկումը, դպրոցական ուսուցման նախապատրաստումը:

2.5. Հաստատության գործունեությունը հիմնվում է ժողովրդավարության, մարդասիրության, ներառականության, ազգային և համամարդկային արժեքների զուգորդման, անձի ազատ զարգացման, կրթության աշխարհիկ բնույթի սկզբունքների վրա:

2.6. Հաստատությունն իր գործունեությունն իրականացնում է նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշիչին, նախադպրոցական կրթական

ծրագրերին, երեխաների տարիքային, ֆիզիոլոգիական և սոցիալ-հոգեբանական զարգացման առանձնահատկություններին, հակումներին ու ընդունակություններին համապատասխան ուսուցման մեթոդների և ձևերի ընտրությամբ:

2.7. Հաստատության կրթական ծրագրերի ապահովման միջոցառումներում և ծառայություններում որպես անբաժանելի մաս կարող են ներառվել՝

1) հաստատության կողմից իրականացվող ուսումնամեթոդական, փորձարարական, հետազոտական աշխատանքները.

2) մանկավարժական աշխատողների մասնագիտական կատարելագործման միջոցառումները.

3) սաների խնամքի, առողջության և անվտանգության պահպանման միջոցառումները՝ պահպանելով առողջապահության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած նորմերը.

4) սաների սննդի կազմակերպումը՝ պահպանելով առողջապահության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած նորմերը.

5) սաների տրանսպորտային կազմակերպված փոխադրումները:

2.8. Հաստատությունը կարող է իրականացնել ձեռնարկատիրական գործունեության հետևյալ տեսակները՝

1) լրացուցիչ կրթական, մարզաառողջարարական, ճամբարներում կազմակերպվող վճարովի ծառայություններ.

2) ստեղծել ռեսուրս-կենտրոններ՝ իրականացնել մասնագետների վերապատրաստման, խորհրդատվական դասընթացներ, վարել ծնողական կրթությանը միտված դասընթացներ և ծրագրեր.

3) կազմակերպել երեխայի տնային ուսուցում, դաստիարակություն և խնամք.

4) կազմակերպել ճկուն ռեժիմով երեխային սպասարկելու ծառայություններ.

5) կազմակերպել սաների երկարօրյա կամ շուրջօրյա ուսուցում և խնամք:

3. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԿՐԹԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

3.1. Հաստատությունում կրթադաստիարակչական գործունեությունը կազմակերպվում է կրթության պետական կառավարման լիազորված մարմնի կողմից երաշխավորված նախադպրոցական կրթության կրթական ծրագրերին (այդ թվում՝ այլընտրանքային, փորձարարական) համապատասխան:

3.2. Նախադպրոցական կրթական ծրագրով սահմանված մակարդակը ապահովվում է կրթության բովանդակային բաղադրիչների միջոցով, որոնք իրականացվում են ըստ տարիքային խմբերի և յուրաքանչյուր երեխայի զարգացման առանձնահատկությունների ու կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիքի, երեխաների գիտելիքների, կարողությունների և հմտությունների ձևավորմամբ՝ այդ տարիքի երեխաների առանձնահատկություններին, զարգացման ոլորտներին և ուղղություններին համապատասխան:

3.3. Հայաստանի Հանրապետությունում նախադպրոցական կրթությունն իրականացվում է գրական հայերենով՝ «Լեզվի մասին» օրենքի պահանջներին համապատասխան՝ բացառությամբ «Նախադպրոցական կրթության մասին» օրենքի 4-րդ հոդվածի 6-րդ մասով նախատեսված դեպքերի:

3.4. Հայաստանի Հանրապետության ազգային փոքրամասնությունների նախադպրոցական կրթությունը կարող է կազմակերպվել իրենց մայրենի կամ ազգային լեզվով՝ հայերենի պարտադիր ուսուցմամբ:

3.5 Երեխայի ընդունելությունը նախադպրոցական ուսումնական հաստատություն, անկախ կազմակերպական-իրավական ձևից, իրականացվում է ծնողի (երեխայի օրինական ներկայացուցչի) դիմումի, հաստատության ու ծնողի (երեխայի օրինական ներկայացուցչի) միջև կնքված պայմանագրի հիման վրա՝ կրթության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած կարգով:

3.6. Հաստատության և ծնողի (երեխայի օրինական ներկայացուցչի) միջև կնքվող պայմանագրի օրինակելի ձևը հաստատում է կրթության պետական կառավարման լիազորված մարմինը:

3.7. Հաստատության խմբերի առավելագույն խտությունը սահմանում է կրթության պետական կառավարման լիազորված մարմինը:

3.8. Ուսումնական տարին սկսվում է սեպտեմբերի 1-ից: Տարիքային խմբերում երեխաների հարմարվողականության փուլի առանձնահատկությունները, կրթական ծրագրերի յուրացման ժամկետները, շաբաթական պարապմունքների բաշխման ցանկը, օրինակելի ռեժիմները, բաց թողած ծրագրային ծավալը լրացնելու պայմանները սահմանվում են կրթական ծրագրերով:

3.9.Տարիքային խմբերի ձևավորումը և երեխաների տեղափոխումն այլ տարիքային խմբեր կատարվում են յուրաքանչյուր տարվա օգոստոսի 20-ից մինչև սեպտեմբերի 5-ը: Ազատ տեղերը համալրվում են ամբողջ տարվա ընթացքում՝ կրթության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած կարգով:

3.10. Հաստատությունում կարող են ձևավորվել տարատարիք, կրթական տարբեր ծրագրեր յուրացնող երեխաներով ձևավորված խմբեր՝ կրթության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած կարգի համաձայն:

3.11. Նախադպրոցական ուսումնական հաստատություններն ըստ տեսակների լինում են՝

1) մսուր՝ 0-3 տարեկանների ընդգրկմամբ.
2) մսուր մանկապարտեզ՝ 0-6 տարեկանների ընդգրկմամբ.
3) մանկապարտեզ՝ 3-6 տարեկանների ընդգրկմամբ.
4) նախակրթարան՝ 5-6 տարեկանների ընդգրկմամբ.
5) կենտրոն՝ 0-6՝ նախադպրոցական բոլոր կամ որևէ տարիքային խմբի ընդգրկմամբ:

3.12. Հաստատության աշխատանքային ռեժիմը սահմանվում է շաբաթական 5-օրյա և 8-ժամյա աշխատանքային ռեժիմով:

3.13. Թույլատրվում է հաստատության կամ առանձին խմբերի գործունեության կազմակերպումը ցերեկային, երեկոյան ժամերին, շուրջօրյա, հանգստյան և տոնական օրերին, ինչպես նաև երեխաների ազատ հաճախումը հաստատություն:

3.14. Սաների սննդի կազմակերպումն իրականացվում է համաձայն առողջապահության բնագավառի պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած համապատասխան ներքին իրավական նորմերի և օրինակելի սննդակազմի:

3.15. Հաստատության սաների բժշկական սպասարկումն իրականացվում է հաստիքային բժշկական անձնակազմի միջոցով, որը տնօրինության հետ պատասխանատվություն է կրում սաների առողջության, ֆիզիկական զարգացման, բուժկանխարգելիչ միջոցառումների անցկացման, սանիտարահիգիենիկ նորմերի, ռեժիմի պահպանման և սննդի որակի համար:

3.16. Հաստատության մանկավարժական և սպասարկող անձնակազմերը հիմնադրի միջոցների հաշվին աշխատանքի ընդունվելիս և հետագայում՝ տարին 1 անգամ ենթարկվում են բժշկական զննության:

4. ԿՐԹԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԸ

4.1. Հաստատության կրթադաստիարակչական գործընթացի մասնակիցներն են՝

1) նախադպրոցական տարիքի երեխան.

2) ծնողը (երեխայի օրինական ներկայացուցիչը).

3) տնօրենը, մեթոդիստը (տնօրենի ուսումնական գծով տեղակալը), դաստիարակը, դաստիարակի օգնականը, լոգոպեդը, հոգեբանը, սոցիալական մանկավարժը, ֆիզիկական կուլտուրայի գծով հրահանգիչը, բուժաշխատողը, խմբակի ղեկավարը և այլ մասնագետներ:

4.2. Սաների ընդունելության ժամանակ հաստատության տնօրինությունը պարտավոր է ծնողներին (օրինական ներկայացուցիչներին) ծանոթացնել կանոնադրությանը և այլ փաստաթղթերի, որոնք կանոնակարգում են հաստատության գործունեությունը:

4.3. Հաստատության և ծնողների փոխհարաբերությունները կարգավորվում են նրանց միջև կնքված պայմանագրով:

4.4. Սանի և հաստատության աշխատակիցների փոխհարաբերությունները կառուցվում են համագործակցության, սանի անհատականության հանդեպ հարգանքի հիմքի վրա:

4.5. Հաստատությունում աշխատանքի ընդունվում են այն անձինք, որոնց որակավորումն ու աշխատանքային ստաժը համապատասխանում է կրթության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած տարիֆաորակավորման բնութագրերին:

4.6. Հաստատության աշխատողների իրավունքներն ու պարտականությունները, աշխատաժամանակի տևողությունը կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենքներով, այլ իրավական ակտերով, սույն կանոնադրությամբ և աշխատանքային պայմանագրով:

5. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

5.1. Հաստատության կառավարումն իրականացնում են Հիմնադիրը, Համայնքի ղեկավարը, գործադիր մարմինը՝ հաստատության տնօրենը (այսուհետ՝ տնօրեն):

5.2. Հաստատության հիմնադիրն ունի հաստատության գործունեությանը և կառավարմանը վերաբերող ցանկացած հարց վերջնական լուծելու իրավունք՝ բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

5.3. Հաստատության հիմնադրի բացառիկ լիազորություններն են՝

1) հաստատության հիմնադրումը.

2) հաստատությանը սեփականության իրավունքով հանձնվող և (կամ) ամրացվող գույքի կազմի հաստատումը.

3) հաստատության կանոնադրության հաստատումը և դրանում փոփոխությունների կատարումը.

4) հաստատության կառավարման համակարգի սահմանումը.

5) հաստատության վերակազմակերպումը և լուծարումը.

6) հաստատության լուծարման հանձնաժողովի ստեղծումը և լուծարման հաշվեկշռի հաստատումը.

7) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ նախատեսված այլ հարցերի լուծումը:

5.4. Համայնքի ղեկավարը՝

1) իրականացնում է հաստատության ընդհանուր կառավարումը, ապահովում նրա բնականոն գործունեությունը և պատասխանատվություն է կրում դրանց չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար.

2) վերահսկողություն է իրականացնում հաստատության գործունեության նկատմամբ.

3) կասեցնում կամ ուժը կորցրած է ճանաչում հաստատության տնօրենի՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին հակասող հրամանները, հրահանգները, կարգադրություններն ու ցուցումները.

4) սահմանում է հաստատության կառուցվածքն ու կառուցվածքային ստորաբաժանումների իրավասությունները.

5) լսում է հաստատության գործունեության մասին հաշվետվությունները, քննում դրա գործունեության վերստուգման արդյունքները.

6) վերահսկողություն է իրականացնում հաստատությանն ամրացված գույքի օգտագործման և պահպանության նկատմամբ.

7) հաստատության կանոնադրությամբ նախատեսված դեպքերում համաձայնություն է տալիս գույքի օտարման կամ վարձակալության հանձնման համար.

8) հաստատում է հաստատության տարեկան հաշվետվությունները և տարեկան հաշվեկշիռը.

9) իրականացնում է հիմնադրի որոշումներով և սույն կանոնադրությամբ նախատեսված այլ գործառույթներ:

10) սույն կանոնադրությամբ սահմանված կարգով իրականացնում է նրա կառավարման մարմինների ձևավորումը և նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը

5.5. Հաստատությունում ուսումնադաստիարակչական գործունեության արդյունավետ կազմակերպման նպատակով կարող են ձևավորվել խորհրդակցական մարմիններ՝ մանկավարժական, ծնողական խորհուրդներ: Կարող են ձևավորվել նաև այլ խորհրդակցական (հոգաբարձուների, շրջանավարտների) մարմիններ:

5.6. Հաստատության ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնում է տնօրենը, որը նշանակվում է մրցույթով: Մինչև տնօրենի թափուր պաշտոն զբաղեցնելու մրցույթի կայացումը Համայնքի ղեկավարը կարող է նշանակել տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով: Տնօրենն օրենքներով, սույն կանոնադրությամբ և իրեն վերապահված այլ լիազորությունների սահմաններում, ղեկավարում է հաստատության գործունեությունն ու կրում պատասխանատվություն օրենքների, այլ իրավական ակտերի, սույն կանոնադրության և կնքված պայմանագրերի պահանջները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար:

5.7. Մանկավարժական խորհրդի կազմում ընդգրկվում են հաստատության բոլոր մանկավարժական աշխատողները:

5.8. Հաստատության ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնում է տնօրենն, որին պաշտոնում նշանակում և պաշտոնից ազատում է Համայնքի ղեկավարը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով: Տնօրենն օրենքներով, սույն

կանոնադրությամբ և իրեն վերապահված այլ լիազորությունների սահմաններում, ղեկավարում է հաստատության գործունեությունն ու կրում պատասխանատվություն օրենքների, այլ իրավական ակտերի, սույն կանոնադրության և կնքված պայմանագրերի պահանջները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար:

5.9. Տնօրենը՝

1) առանց լիազորագրի հանդես է գալիս հաստատության անունից, ներկայացնում նրա շահերը և կնքում է գործարքներ.

2) նախագահում է հաստատության մանկավարժական խորհրդի նիստերը.

3) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ սահմանված կարգով տնօրինում է հաստատության գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները.

4) տալիս է հաստատության անունից հանդես գալու լիազորագրեր, այդ թվում՝ վերալիազորման իրավունքով լիազորագրեր.

5) աշխատանքի նշանակում և աշխատանքից ազատում է հաստատության աշխատողներին, նրանց նկատմամբ կիրառում խրախուսման միջոցներ և նշանակում կարգապահական տույժեր համաձայնեցնելով հիմնադրի հետ.

6) բանկերում բացում է հաշվարկային հաշիվներ.

7) օրենքով և սույն կանոնադրությամբ սահմանված իր լիազորությունների սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, տալիս պարտադիր կատարման համար ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը.

8) համաձայն պաշտոնների անվանացանկի և պաշտոնի նկարագրի՝ անցկացնում է դաստիարակների թափուր տեղի համար մրցույթը, մանկավարժական և այլ կադրերի ընտրությունը, կնքում և լուծում է աշխատանքային պայմանագրերը, բաշխում աշխատանքը.

9) վերահսկողություն է իրականացնում հաստատության աշխատողների կողմից իրենց աշխատանքային պարտականությունների կատարման նկատմամբ.

10) ապահովում է ներքին աշխատանքային կարգապահության կանոնների, աշխատանքի պաշտպանության և անվտանգության տեխնիկայի պահպանումը.

11) կազմում է հաստատության հաստիքային ցուցակն ու ծախսերի նախահաշիվը և դրանք ներկայացնում հիմնադրի հաստատմանը.

12) իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված այլ լիազորություններ.

13) պատասխանատու է նախադպրոցական կրթության պետական չափորոշչին և համապատասխան տարիքային խմբի ծրագրերին համապատասխան ուսումնադաստիարակչական գործընթացի կազմակերպման, սաների առողջության պահպանման համար:

5.10. Հաստատության տնօրենի լիազորությունները դադարեցվում են՝

1) իր դիմումի համաձայն.

2)եթե լրացել է 65 տարին.

3)իր գրավոր համաձայնությամբ ընտրվել կամ նշանակվել է այլ պաշտոնում կամ անցել է իր պաշտոնի հետ անհամատեղելի այլ աշխատանքի.

4) ժամանակավոր աշխատունակության հետևանքով ավելի քան չորս ամիս անընդմեջ չի ներկայացել աշխատանքի.

5) երկու օր անընդմեջ անհարգելի պատճառներով չի ներկայացել աշխատանքի.

6)նշանակվել է օրենքի պահանջների խախտմամբ կամ առաջ են եկել հետևյալ հանգամանքները՝

ա) դատապարտվել է հանցագործության կատարման համար և նրա դատվածությունը մարված կամ հանված չէ,

բ) օրենքի համաձայն արգելվել է ղեկավար պաշտոններ զբաղեցնել,

գ) նախընթաց երեք տարիների ընթացքում եղել է սնանկանալու պատճառով լուծարված և իր պարտատերերի օրինական պահանջները չբավարարած կազմակերպության ղեկավար,

7)իր գործառույթներն իրականացելիս Հաստատությանը, պետությանը կամ համայնքին իր մեղքով հասցրել է վնաս, որի գումարը գերազանցում է Հաստատության սեփականության իրավունքով պատկանող գույքի արժեքի հինգ տոկոսը,

8) դատարանի օրինական ուժի մեջ մտած վճռի հիման վրա ճանաչվել է անգործունակ, սահմանափակ գործունակ, անհայտ բացակայող կամ մահացած,

9)օրինական ուժի մեջ է մտել նրա նկատմամբ կայացված մեղադրական դատավճիռը.

10) զրկվել է Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունից,

11) նրա ղեկավարած Հաստատությունը դատական կարգով ճանաչվել է սնանկ կամ ունի դատարանի կողմից համապատասխան վճիռն ընդունվելուց հետո վեց ամսվա ընթացքում իր մեղքով չկատարված գույքային պարտականություն,

12) Հաստատության կողմից վճարման ենթակա հարկերը կամ սոցիալական ապահովագրության հիմնադրամի վճարները սահմանված ժամկետից հետո իր մեղքով հաշվետու ժամանակաշրջանում չեն վճարվել,

13)մեկ տարվա ընթացքում ենթարկվել է կրկնակի կարգապահական պատասխանատվության:

5.11.Տնօրենի բացակայության դեպքում Համայնքի ղեկավարի գրավոր որոշման (հրամանի) համաձայն, նրա լիազորություններն իրականացնում է մեթոդիստը (տնօրենի ուսումնական գծով տեղակալը), իսկ անհնարինության դեպքում՝ 5 տարվա նախադպրոցական մանկավարժական փորձ ունեցող մասնագետը:

5.12. Մեթոդիստը (տնօրենի ուսումնական գծով տեղակալը)՝

1) իրականացնում է կրթադաստիարակչական աշխատանքի մեթոդական ղեկավարումը.

2) ապահովում և վերահսկում է նախադպրոցական կրթական ծրագրերի կատարումը.

3) պատասխանատու է կրթադաստիարակչական աշխատանքների որակի և արդյունքի համար.

4) կազմակերպում է հաստատության մեթոդկաբինետի աշխատանքը.

5) դաստիարակներին մշտապես հաղորդակից է դարձնում մանկավարժական գիտությունների նորույթներին.

6) կազմակերպում է երեխաների տարիքային զարգացման առանձնահատկությունների վերաբերյալ իրազեկման մասնագիտական աշխատանք ծնողների շրջանում:

5.13. Դաստիարակը՝

1) պատասխանատվություն է կրում սաների կյանքի և առողջության պահպանման համար.

2) պատասխանատու է սաների համակողմանի զարգացման և դաստիարակության, ինչպես նաև ստեղծագործական երևակայության զարգացման համար.

3) մշտապես համագործակցում է սաների ընտանիքի հետ, անհատական խորհրդատվությունների, ծնողական ժողովների, տնային այցերի միջոցով կազմակերպում աշխատանք ծնողների շրջանում:

5.14. Երաժշտական ղեկավարը (երաժշտության դաստիարակը)՝

1) նախադպրոցական կրթական ծրագրին համապատասխան, դաստիարակների հետ համատեղ իրականացնում է սաների երաժշտական դաստիարակությունը.

2) ծնողների շրջանում խորհրդատվություն է կազմակերպում սաների երաժշտական, գեղագիտական դաստիարակության հարցերի շուրջ:

5.15. Տնտեսական մասի վարիչը (տնօրենի տնտեսական աշխատանքի գծով օգնականը)՝

1) կազմակերպում է հաստատության տնտեսական սպասարկումը, անհրաժեշտ մթերքի, գույքի և սարքավորումների ստացումն ու պահպանությունը.

2) մասնակցում է ճաշացուցակի և սննդամթերքի պահանջագիր-հայտերի կազմմանը.

3) հետևում է հաստատության տեղամասի, շենքի, գույքի և սարքավորումների վիճակին, միջոցներ է ձեռնարկում դրանք ժամանակին վերանորոգելու համար.

4) պատասխանատու է սպասարկող անձնակազմի աշխատանքային և կատարողական կարգապահության համար:

6. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԳՈՒՅՔԸ ԵՎ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

6.1. Հաստատության սեփականությունը ձևավորվում է հաստատության հիմնադրման ժամանակ և հետագայում հիմնադրի կողմից սեփականության իրավունքով նրան հանձնվող, ինչպես նաև հաստատության գործունեության ընթացքում ձեռք բերված գույքից:

6.2. Հաստատությունն իրավունք ունի օրենքին, հիմնադրի որոշումներին և (կամ) իր կանոնադրությանը համապատասխան իր հայեցողությամբ տիրապետելու, տնօրինելու և օգտագործելու սեփականության (վարձակալության) իրավունքով իրեն պատկանող գույքը:

6.3. Հիմնադիրը սեփականության իրավունքով հաստատությանը պատկանող գույքի նկատմամբ չունի իրավունքներ՝ բացառությամբ հաստատության լուծարումից հետո մնացած գույքի:

6.4. Հաստատության սեփականության պահպանման հոգսը կրում է հաստատությունը:

6.5. Հաստատության սեփականության վրա կարող է տարածվել բռնագանձում՝ միայն դատական կարգով:

6.6. Հիմնադիրն իրավունք ունի հետ վերցնելու իր կողմից հաստատությանն ամրացված գույքը:

6.7. Հաստատությունն իրավունք չունի ամրացված գույքը կամ դրա նկատմամբ իր իրավունքներն օտարելու, գրավ դնելու, անհատույց օգտագործման հանձնելու:

6.8. Պետական կամ համայնքային սեփականություն համարվող հաստատությունների շենքերը կարող են օտարվել միայն բացառիկ դեպքերում՝ կառավարության որոշմամբ:

6.9. Հաստատության գույքը կարող է վարձակալությամբ հանձնվել միայն Հիմնադրի որոշմամբ:

6.10. Հաստատության գույքի վարձակալումից ստացված եկամուտը հանդիսանում է հաստատության սեփականությունը և կարող է օգտագործվել միայն կանոնադրական գործառույթների իրականացման համար:

6.11. Հաստատության լուծարման դեպքում նրա գույքի օգտագործման և տնօրինման կարգը որոշում է Հիմնադիրը:

6.12. Հաստատությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տնօրինում է իր ֆինանսական միջոցները:

6.13. Հաստատությունը ֆինանսավորում է Հիմնադիրը: Հաստատության ֆինանսական միջոցները գոյանում են Հիմնադրի հատկացումներից և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված լրացուցիչ աղբյուրներից:

6.14. Համայնքային հաստատությունների՝ պետական բյուջեից մեկ սանի հաշվարկով ֆինանսավորման կարգը, այդ թվում՝ կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների ապահովման համար անհրաժեշտ ֆինանսավորման բարձրացված չափաքանակը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

6.15. Հաստատության ֆինանսավորման լրացուցիչ աղբյուրներն են՝

1) ձեռնարկատիրական գործունեության իրականացումից գոյացած միջոցները.

2) բարեգործական, նպատակային ներդրումները, վարձավճարները, Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա կազմակերպությունների ու քաղաքացիների նվիրատվությունները.

3) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված և հաստատության կանոնադրական խնդիրներին չհակասող գործունեությունից ստացված միջոցները:

6.16. Հաստատության գործունեության տարեկան ֆինանսական հաշվետվությունների հավաստիությունը ենթակա է աուդիտի (վերստուգման)՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

7. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ

7.1. Հաստատությունը վերակազմակերպվում և լուծարվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Աշխատակազմի քարտուղար՝ Մ. Հովհաննիսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամոր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Մեծամոր, 060656505 info@mecamor.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

31 հունվարի 2025 թվականի N 9-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ 1,09369 ՀԱ ՀՈՂԱՄԱՍԸ ՆՎԻՐԱԲԵՐՈՒԹՅԱՄԲ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 28-Ի N 43-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի 605-րդ հոդվածի դրույթներով, և հիմք ընդունելով Մեծամոր համայնքի ղեկավարի առաջարկությունը.

ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի սեփականությունը համարվող բնակավայրերի նպատակային նշանակության հասարակական կառուցապատման գործառնական նշանակության 1,09369 հա հողամասը (կադ. ծածկագիր 04-003-0101-0093) նվիրաբերությամբ տրամադրել Հայաստանի Հանրապետությանը՝ հաշմանդամություն ունեցող անձանց համար անկախ կյանքի կենտրոն կառուցելու նպատակով:

2. Ուժը կորցրած ճանաչել Մեծամոր համայնքի ավագանու 2024 թվականի մարտի 28-ի «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամոր համայնքին սեփականության իրավունքով պատկանող 1,09369 հա հողամասը նվիրաբերությամբ տրամադրելու մասին» N 43-Ա որոշումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ -17

Դեմ -0 Ձեռնպահ -0

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՎԱՀՐԱՄ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԷԴԳԱՐ

ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ՌԱԶՄԻԿ

ԱՀԱՐՈՆՅԱՆ ՍԵՐԳԵՅ

ԱՍԱՏՐՅԱՆ ԷԴԳԱՐ

ԲԱՐԵՂԱՄՅԱՆ ԱՇՈՏ

ԴՈԲՈՅԱՆ ՏԱՏՅԱՆԱ

ԵՐՎԱՆԴՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ

ՁԱՔԱՐՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԳԱՅԱՆԵ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱՀԱՊԵՏ

ՄԱԿՅԱՆ ՄԱՐԳԱՐԻՏԱ

ՄԱՑԱԿՅԱՆ ՏՈՆԻԿ

ՄԽԻԹԱՐՅԱՆ ԱՐԱՄԱՅԻՍ

ՇՄԱՎՈՆՅԱՆ ԱՐՄԵՆ

ՍԱՐԳՍՅԱՆ ՎԱՐԴԳԵՍ

ՍՆՋՈՅԱՆ ԱՐՏՅՈՄ

Համայնքի ղեկավար՝ **Վ. ԽԱՉԱՏՐՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամոր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Մեծամոր, 060656505 info@mecamor.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

31 հունվարի 2025 թվականի N 10-Ա

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՓՇԱՏԱՎԱՆ ԳՅՈՒՂԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետով, և հիմք ընդունելով Մեծամոր համայնքի ղեկավարի առաջարկությունը՝

ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հաստատել «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի Փշատավան գյուղի մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության աշխատողների քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ -17 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՎԱՀՐԱՄ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԷԴԳԱՐ

ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ՌԱԶՄԻԿ

ԱՀԱՐՈՆՅԱՆ ՍԵՐԳԵՅ

ԱՍԱՏՐՅԱՆ ԷԴԳԱՐ

ԲԱՐԵՂԱՄՅԱՆ ԱՇՈՏ

ԴՈԲՈՅԱՆ ՏԱՏՅԱՆԱ

ԵՐՎԱՆԴՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ

ՁԱՔԱՐՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԳԱՅԱՆԵ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱՀԱՊԵՏ

ՄԱԿՅԱՆ ՄԱՐԳԱՐԻՏԱ

ՄԱՅԱԿՅԱՆ ՏՈՆԻԿ

ՄԽԻԹԱՐՅԱՆ ԱՐԱՄԱՅԻՍ

ՇՄԱՎՈՆՅԱՆ ԱՐՄԵՆ

ՍԱՐԳՍՅԱՆ ՎԱՐԴԳԵՍ

ՍՆՋՈՅԱՆ ԱՐՏՅՈՄ

Համայնքի ղեկավար՝ **Վ. ԽԱՉԱՏՐՅԱՆ**

Հավելված N 1
ՀՀ Արմավիրի մարզի Մեծամորի համայնքի
ավագանու 2025 թվականի հուլիսի 31-ի
N 10-Ա որոշման

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՓՇԱՏԱՎԱՆ ԳՅՈՒՂԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

Հ/Հ	Հաստիքի անվանումը	Հաստիքային միավորը	Պաշտոնային դրույքաչափ	Աշխատավարձի չափը
1	տնօրեն	1.0	180000	180000
2	մեթոդիստ՝ տնօրենի ուսումնական գծով տեղակալ	0.5	160000	80000
3	դաստիարակ	3.51	120000	421200
4	դաստիարակի օգնական	3.0	110000	330000
5	բուժքույր	1.0	125000	125000
6	գլխավոր հաշվապահ	0.5	160000	80000
7	երաժշտության դաստիարակ (երաժշտական ղեկավար)	0.75	120000	90000
8	տնտեսվար	0.5	120000	60000
9	խոհարար	1.0	120000	120000
10	խոհարարի օգնական	0.5	110000	55000
11	լվացարար	0.5	105000	52500
12	պահակ	1.0	105000	105000
13	հավաքարար	0.5	110000	55000
ընդամենը		**14.26**	**1645000**	**1753700**

Աշխատակազմի քարտուղար Մ. Հովհաննիսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամոր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Մեծամոր, 060656505 info@mecamor.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

31 հունվարի 2025 թվականի N 11-Ա

«ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԵՂԱԿԱՆ ԲԱՑ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՂ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 42-րդ 1-ին մասի 42-րդ կետով և հիմք ընդունելով Մեծամոր համայնքի ղեկավարի առաջարկությունը

ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1.Հաստատել «Մեծամոր համայնքի տեղական բաց կառավարման գործընկերություն» նախաձեռնության համատեղ գործողությունների ծրագիրը:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ -17 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՎԱՀՐԱՄ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԷԴԳԱՐ

ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ՌԱՉՄԻԿ

ԱՀԱՐՈՆՅԱՆ ՍԵՐԳԵՅ

ԱՍԱՏՐՅԱՆ ԷԴԳԱՐ

ԲԱՐԵՂԱՄՅԱՆ ԱՇՈՏ

ԴՈԲՈՅԱՆ ՏԱՏՅԱՆԱ

ԵՐՎԱՆԴՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ

ՋԱՔԱՐՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԳԱՅԱՆԵ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱՀԱՊԵՏ

ՄԱԿՅԱՆ ՄԱՐԳԱՐԻՏԱ

ՄԱՅԱԿՅԱՆ ՏՈՆԻԿ

ՄԽԻԹԱՐՅԱՆ ԱՐԱՄԱՅԻՍ

ՇՄԱՎՈՆՅԱՆ ԱՐՄԵՆ

ՍԱՐԳՍՅԱՆ ՎԱՐԴԳԵՍ

ՄՆՋՈՅԱՆ ԱՐՏՅՈՄ

Համայնքի ղեկավար՝ **Վ. ԽԱՉԱՏՐՅԱՆ**

Հաստատվել է
ՀՀ Իրավասու մարմնի
համայնքապետարանի Մեծամոր
համայնքապետարանի 2025 թվականի
հունվարի [illegible]-ի թիվ [illegible] որոշման

ԾՐԱԳԻՐ

ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԵՂԱԿԱՆ ԲԱՑ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅԱՆ 2025-2026 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

Հայաստանի Հանրապետության կառավարությունը միացել է «Բաց կառավարման գործընկերություն» (ԲԿԳ) նախաձեռնությանը 2011 թվականին և անդամակցությունից ի վեր իրականացրել է հինգ ազգային գործողությունների ծրագրեր: Գործողությունների ծրագրերը միտված են բարելավելու կառավարության կողմից ստանձնված բարեփոխումների օրակարգը՝ դարձնելով դրանք ավելի թափանցիկ, հաշվետու, մասնակցային և նորարար:

Բաց կառավարման գործընկերության ստեղծման առաջին տասնամյակում մոտ 200 ազգային և տեղական կառավարություններ, հազարավոր քաղաքացիական հասարակության կազմակերպություններ և շատ այլ կառույցներ միացել են նախաձեռնությանը:

2020 թվականին ԲԿԳ-Հայաստան քարտուղարությունը հանդիպում-քննարկումներ է իրականացրել Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության և խոշոր համայնքների ներկայացուցիչների հետ, ինչի արդյունքում 2020 թվականին տեղական ԲԿԳ անդամներ են դարձել Վանաձոր և Գյումրի համայնքները միասնական (կոնսորցիում) ձևաչափով:

Տեղական ԲԿԳ նոր անդամակցության գործընթացի մեկնարկի շրջանակներում անդամակցության հայտ են ներկայացրել Երևանի և Արմավիրի համայնքապետարանները՝ միանալով տեղական ԲԿԳ-ին 2022 թվականին:

Մեծամորի համայնքապետարանը ծանոթացել է ԲԿԳ գործունեությանը մասնակցելով Բաց ՀՀ Վարչապետի աշխատակազմի և ԲԿԳ Հայաստանյան քարտուղարության հետ համատեղ իրականացվող «ԲԿԳ Հայաստան 2022-2024թթ գործողությունների ծրագրի գնահատման» հաշվետվության ներկայացմանը: 2023 թվականի սեպտեմբերին Մեծամոր համայնքի ղեկավար Վահրամ Խաչատրյանի գլխավորած պատվիրակությունը մասնակցել է «Բաց կառավարման գործընկերություն» գլոբալ գագաթնաժողովին Տալիննում, որը համախմբում էր կառավարությունների, տեղական իշխանությունների, օրենսդիր մարմինների և գործընկեր կազմակերպությունների ներկայացուցիչներին: Ծանոթանալով թե՛ ազգային, և թե՛ տեղական իշխանությունների իրականացրած ծրագրերին, ԲԿԳ գործողությունների արժեքներին և տեսլականին, ունենալով հանդիպումներ տարածաշրջանային և

տեղական ԲԿԳ ներկայացուցիչների հետ՝ Մեծամորի համայնքապետարանը 2024 թվականին հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների հետ համատեղ դիմել է «Բաց կառավարման գործընկերություն» նախաձեռնության ղեկավար կոմիտեի անդամներին՝ «Տեղական ԲԿԳ» անդամ դառնալու նպատակով, և 2024 թվականի ապրիլին դարձել «Տեղական Բաց կառավարում» նախաձեռնության անդամ:

2024 թվականի հունիսի 6-ին կայացավ «Բաց կառավարման Արևելյան գործընկերության համայնքային երկխոսության» միջոցառումը, որի նպատակն էր քննարկել բաց և լավ կառավարման հիմնաքար հանդիսացող հակակոռուպցիոն, հանրային ֆինանսների կառավարման, մասնակցության և նորարարության իրացման արդյունավետ մեխանիզմները և մարտահրավերները, որին Մեծամոր համայնքը մասնակցում էր որպես տեղական-ԲԿԳ նոր անդամ:

2024 հունիսի 8-ին Մեծամոր համայնքի ղեկավարի առաջին տեղակալ Էդգար Հովհաննիսյանը Արմավիրի համայնքապետարանում մասնակցեց ԲԿԳ Արևելյան գործընկերության երկրների տարածաշրջանային համակարգող Պիտեր Վարգայի, Տեղական բաց կառավարման ղեկավար Խոսե Մարիա Մարինի, Արմավիրի զարգացման կենտրոնի ղեկավար Նաիրա Առաքելյանի և Երևանի քաղաքապետարանի տեղական ԲԿԳ-համակարգող Մերի Հարությունյանի հետ հանդիպում-քննարկմանը:

Տեղական գործողությունների ծրագիրը համատեղ մշակելու համար նշանակվեցին պատասխանատու անձինք և՛ համայնքային ներկայացուցիչներից, և՛ ՔՀ կազմակերպություններից: Շահագրգիռ կողմերը պարբերական հանդիպումների արդյունքում համաձայնեցին համագործակցել և ներդնել ջանքեր՝ արդյունավետ երկխոսություն ձևավորելու և տեղական գործողությունների ծրագիրը համատեղ մշակելու համար:

2024 թվականի հունիսից սկսվեցին հանդիպումներ, տեղեկատվական արշավներ իրականացվել քաղաքացիական հասարակության գործընկերների, համայնքապետարանի աշխատակիցների, Հայաստանում տեղական ԲԿԳ անդամ համայնքերի և միջազգային կազմակերպությունների մասնակցությամբ:

2024թ. հուլիսի 19-ին Մեծամորի համայնքապետարանը տեղական-ԲԿԳ մյուս համայնքերի հետ միասին մասնակցեց Երևանի քաղաքապետարանի կողմից կազմակերպած հանրային տեղեկատվական բացօթյա միջոցառմանը, որի նպատակն էր որոշումների կայացման գործընթացում մասնակցայնության բարձրացումը:

Տեղական-ԲԿԳ նախաձեռնության հետ կապված տեղեկատվության հասանելիության, գործողությունների ծրագրի մշակման, ընթացիկ գործունեության վերաբերյալ քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների, հասարակական կազմակերպությունների, քաղաքացիների շրջանում իրազեկվածությունն ապահովելու նպատակով ստեղծվեց ԲԿԳ Մեծամոր ֆեյսբուքյան էջ, որտեղ տեղադրվում է իրականացված և նախատեսվող աշխատանքների վերաբերյալ տեղեկատվություն:

2024 թվականի Նոյեմբերի 6-ին Մեծամորի համայնքապետարանը Արմավիրի Զարգացման Կենտրոն ՀԿ-ի հետ միասին կազմակերպեց քննարկում և իրազեկում Մեծամորի համայնքապետարանի տեղական ԲԿԳ գործողությունների ծրագրի մշակման վերաբերյալ տեղական-ԲԿԳ նախաձեռնության աշխատանքային գործընթացները համակարգող/կոնտակտային անձանց, համայնքապետարանի աշխատակիցների, տեղական ՀԿ ներկայացուցիչների, Բաց կառավարման գործընկերություն-Հայաստան նախաձեռնության համակարգողի հետ: Հանդիպման ընթացքում քննարկվեցին

Մեծամորի համայնքապետարանի հանձնառությունները, գործողությունների ծրագրի մշակման հետագա քայլերը, առաջնահերթությունները:

Նոյեմբերի 21-ին Մեծամոր քաղաքում տեղի ունեցավ հանդիպում Մեծամոր համայնքի ՀԿ ներկայացուցիչների հետ՝ քննարկելու տեղական Բաց Կառավարման Գործընկերության շրջանակում Մեծամոր համայնքի գործողությունների ծրագրի առաջնահերթությունները և ներկայացվեցին առաջարկություններ:

Մեծամորի համայնքապետարանը առաջարկություններ հավաքագրեց նաև նոյեմբերի 24-ին Մեծամոր քաղաքում կազմակերպված երիտասարդական էքսպոյի շրջանակում, որին մասնակցում էին շուրջ 750 երիտասարդ Մեծամոր քաղաքից և գյուղական բնակավայրերից:

Հավաքագրված առաջարկությունների հիման վրա առանձնացվեց 2 հիմնական ուղղություն՝ մասնակցային բյուջետավորման մեխանիզմի ներդնում և երիտասարդների մասնակցության խթանում: Մշակված գործողությունների պլանը և հանձնառությունները ներկայացվեց քննարկման Մեծամորի համայնքապետարանում՝ ֆինանսատնտեսագիտական և գնումների բաժնի, քարտուղարության, անձնակազմի կառավարման, տեղեկատվական տեխնոլոգիաների բաժնի, սոցիալական աջակցության, առողջապահության հարցերի բաժնի, կրթության, մշակույթի, սպորտի և երիտասարդության հարցերի բաժնի ներկայացուցիչների, ՔՀԿ ներկայացուցիչների, տեղական-ԲԿԳ նախաձեռնության աշխատանքային գործընթացները համակարգող/կոնտակտային անձանց մասնակցությամբ:

Ռազմավարական տեսլական

Բնակավայրերի թվաքանակով լինելով ամենամեծը մարզում և ունենալով ավելի քան 80 հազար բնակիչ՝ համայնքը շարժվում է բնակավայրերի համաչափ զարգացման ուղիով, և այս համատեքստում գործընթացին խթանելու տեսանկյունից կարևորում Տեղական ԲԿԳ հարթակին միանալը: Մեծամոր համայնքը ընդգրկում է Մեծամոր քաղաքը, Ալաշկերտ, Ակնալիճ, Ամասիա, Այգեշատ, Արազափ, Արգավանդ, Արևիկ, Արմավիր, Արտաշար, Բամբակաշատ, Բերքաշատ, Գետաշեն, Եղեգնուտ, Երասխահուն, Զարթոնք, Հայկավան, Մարգարա, Մրգաշատ, Նալբանդյան, Նոր Արմավիր, Նոր Արտագերս, Նոր Կեսարիա, Նորապատ, Շենավան, Ջանֆիդա, Ջրաշեն, Վարդանաշեն, Տանձուտ, Տարոնիկ, Փշատավան գյուղերը:

Համայնքի խոշորացման և բնակչության թվաքանակի ավելացման հետ մեկտեղ աճել է նաև ծառայությունների պահանջարկը, ավելի արդյունավետ և պատասխանատու տեղական ինքնակառավարման մարմինների անհրաժեշտությունը: Մեծամոր տեղական ինքնակառավարման շրջանում խթանում, լայնորեն տարածում և առաջ է տանում պատշաճ կառավարման սկզբունքները, բարձրացնում է համայնքի կարողունակությունը և վարչարարական հմտությունները՝ պատշաճ օգտագործում տեղական կառավարման ներուժը, ապահովելով արդյունավետ և որակյալ ծառայությունների մատուցում: Համայնքը համագործակցում է քաղաքացիական հասարակության, մշակութային, գիտական շրջանակների, մասնավոր հատվածի և այլ կողմերի հետ՝ սոցիալական, տնտեսական, մշակութային և մի շարք այլ ոլորտների խնդիրներին նորարարական և կայուն լուծումներ տալու նպատակով:

Մեծամորը հանդիսանում է Հայաստանի համայնքների միության անդամ և մշտապես կիսվում և առաջ է տանում տեղական ինքնակառավարման մարմինների շրջանում լավ կառավարման սկզբունքները: Համայնքապետարանը հնգամյա և միամյա զարգացման ծրագրերի, համայնքի բյուջեի մշակման ժամանակ իրականացնում է հանրային կարևորություն ներկայացնող որոշումների ընդունմանը մասնակցելու հնարավորություն ընձեռող հանրային քննարկումների, հանրային բաց լսումների, հանդիպումների, հարցումների կազմակերպում: Այդպիսով քաղաքացիներին հնարավորություն ընձեռելով կարծիք հայտնել ավագանու որոշման նախագծերի, համայնքի կողմից մատուցվող ծառայությունների ընթացակարգերի, հարկային պարտավորությունների, հաշվետվությունների, համայնքային սեփականության գույքի կառավարման և այլնի վերաբերյալ:

Համայնքապետարանը իրականացնում է ավագանու նիստերի առցանց հեռարձակում, ինչպես նաև համայնքի պաշտոնական վեբ-կայքում տեղեկատվության թափանցիկության ապահովում՝ ավագանու և համայնքի ղեկավարի որոշումների, կարգադրությունների, ուղերձների և այլ իրավական ակտերի կանոնավոր հրապարակումների միջոցով: Մեծամորի համայնքապետարանը նաև ակտիվ օգտագործում է համայնքապետարանի սոցիալական կայքը բնակիչներին ավելի հասանելի և մատչելի տեղեկտավություն տրամադրելու համար:

2024թ-ին Մեծամորի համայքնապետարանը մշակել է երիտասարդական քաղաքականության ռազմավարություն, որն առաջնահերթությունների, ծրագրերի, միջոցառումների և մեխանիզմների համակարգ է՝ ուղղված է Մեծամոր համայնքում երիտասարդության մասնակցության խրախուսմանը, երիտասարդների ներուժի բացահայտմանը, սոցիալականացման, ինքնաիրացման, ներգրավման ու զարգացման անհրաժեշտ պայմանների ստեղծմանը և մեխանիզմների խթանմանը:

Տեղական-ԲԿԳ անդամակցումից ի վեր և տեղական գործողությունների ծրագրի համաստեղծման գործընթացում համագործակցության հարթակ է ստեղծվել համայնքի տարբեր շահագրգիռ կողմերի միջև: Գործողությունների ծրագիրը մշակելիս տեղական ԲԿԳ պատասխանատու անձնինք, համայնքապետարանի ներկայացուցիչները, և քաղաքացիական հասարակության գործընկերները հաշվի են առել համայնքի առկա ռեսուրսները, պարտավորությունները, տեղական առանձնահատկությունները, երկրի տնտեսական և քաղաքական առկա իրավիճակը, ինչպես նաև առաջիկա զարգացումների կանխատեսումները:

Մեծամորի համայնքապետարանը ձգտում է կառուցել թափանցիկ, ներառական և մասնակցային կառավարման մոդել՝ համահունչ բաց կառավարման գործընկերության սկզբունքներին՝ թափանցիկությանը, հաշվետվողականությանը, մասնակցայնությանը, նորարարությանը:

Ընդունելով բաց կառավարման սկզբունքները քաղաքապետարանը նպատակ ունի՝

- Ապահովել տեղեկատվության հասանելիությունը համայնքի բնակչության համար,
- Ինստիտուցիոնալացնել քաղաքացիների մասնակցությունը՝ կառավարման կառուցվածքում մասնակցային մեխանիզմներ ներդնելով,
- Նպաստել հանրային ծառայությունների մատուցման նորարարություններին և բաց լինելուն՝ արդյունավետությունն ու ներառականությունը բարձրացնելու համար,

- Ամրապնդել տեղական իշխանության, քաղաքացիական հասարակության և այլ շահագրգիռ կողմերի միջև համագործակցությունը՝ տեղական մարտահրավերներին համատեղ լուծումներ մշակելու և իրականացնելու համար:

Այս ջանքերի շնորհիվ Մեծամորը համայնքապետարանը ձգտում է վերածվել տեղական ԲԿԳ համայնքի օրինակելի մոդելի, որտեղ արմատավորվում են ժողովրդավարական արժեքները, ամրապնդվում է հանրային վստահությունը, քաղաքացիների մասնակցությունը:

1. Մասնակցային բյուջետավորման համակարգի ներդնում		
Լիազոր մարմինը		Մեծամորի համայնքապետարան
Լիազոր մարմնի պատասխանատու անձը, պաշտոնը, վարչությունը, էլ. հասցե, հեռախոսահամարը		Համայնքի ղեկավարի առաջին տեղակալ՝ Էդգար Հովհաննիսյան edgarhovhannisyan26@mail.ru, 077 626212
	Քաղաքացիական հասարակություն, մասնավոր հատված	Հասարակական կազմակերպություններ Քաղաքացիական հասարակության կազմակերպություններ, Արմավիրի Զարգացման Կենտրոն ՀԿ, Ընտանիք և համայնք ՀԿ, Երիտասարդական Խորհրդարան ՀԿ Հույսի Մեծամոր ՀԿ
Կարգավորման ենթակա խնդիրը և հիմնական նպատակը		Համայնքային մակարդակում կայացվող որոշումները անմիջական և ուղղակի ազդեցություն ունեն մարդկանց կյանքի և կեցության վրա, հետևաբար համայնքի բնակիչները պետք է հնարավորություն ունենան ազդելու տեղական իշխանությունների որոշումների վրա: Մասնակցային բյուջետավորման գործընթացի ներդրումը հնարավորություն է տալիս համայքներում խթանել բնակչության անմիջական մասնակցությունը բյուջետային գործընթացներին՝ մեծացնելով հանրային ռեսուրսների բաշխման հասցեականությունը եւ արդյունավետությունը:

	Այսպիսով համայնքի բնակիչները հնարավորություն են ստանում ներկայացնել իրենց համայնքին առնչվող գաղափարներ ու ծրագրեր, որոնք կդիտարկվեն, կքննարկվեն, իրենց իսկ կողմից քվեարկությամբ կընտրվեն եւ կիրականացվեն համայքում:
Պարտավորության հակիրճ նկարագրություն	Ըստ Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման եվ ենթակառուցվածքների նախարարության համայնքներում մասնակցային բյուջետավորման ընթացակարգերի վերաբերյալ մշակած մեթոդական ուղեցույցի՝ իրականացնել մասնակցային բյուջետավորման 8 փուլերը Մեծամոր համայքնում՝ 1) նախապատրաստական փուլ, 2) իրազեկման փուլ, 3) առաջարկների ներկայացման փուլ, 4) առաջարկների նախնական գնահատման փուլ, 5) հանրային քննարկումների և լսումների փուլ, 6) քվեարկության փուլ, 7) իրականացման փուլ, 8) հաշվետվության փուլ:
ԲԿԳ ո՞ր մարտահրավերից է բխում պարտավորությունը	Թափանցիկություն Հաշվետվողականություն Մասնակցություն Նորարարություն
Համապատասխանությունը ԲԿԳ արժեքներին	Նորարարություն/տեխնոլոգիա Տեղեկատվության մատչելիություն
Կայուն զարգացման ո՞ր նպատակների կամ թիրախների իրականացմանն է աջակցում	11. Կայուն քաղաքներ և համայնքներ

Ընթացիկ գործողություններ	**Ժամկետներ**
Հանրային իրազեկում, տեղեկատվական արշավ (սոցիալական մեդիայի, տպագրական նյութերի, համայնքում հանդիպումներ) մասնակցային բյուջետավորման վերաբերյալ Մեծամոր համայնքում՝ ներառելով Մեծամոր քաղաքը և 30 գյուղական բնակավայրերը	2025 մարտ-հունիս *(իրազեկում թե՛ համայնքում մասնակցային բյուջետավորման գործընթացի մեկնարկի, թե՛ առաջարկների ներկայացման և քվեարկության փուլերում)*

Տեղական մակարդակում որոշումների կայացմանը քաղաքացիների մասնակցության խթանման նպատակով համայնքային կառավարման տեղեկատվական համակարգում մասնակցային բյուջետավորման էլեկտրոնային ենթահամակարգի ներդնում	2025 փետրվար
Դասընթացների և տեղեկատվական հանդիպումների կազմակերպում համայնքապետարանի աշխատակազմի համար՝ մասնակցային բյուջետավորումը կազմակերպելու գործընթացում խորացված գիտելիքներ ստանալու նպատակով	2025 մարտ-ապրիլ
Մասնակցային բյուջետավորման ծրագրերի-նախագծերի հավաքագրում համայնքապետարանի կայքի էլեկտրոնային գործիքի միջոցով	2025 ապրիլ-մայիս
Մասնակցային բյուջետավորման գործընթացում ստացված ծրագրերի-նախագծերի քվեարկության փուլի կազմակերպում	2025 մայիս
Մասնակցային բյուջետավորման գործընթացում հաղթած ծրագր(եր)ի-նախագծ(եր)ի իրականացում համայնքում	2025 հունիս- հոկտեմբեր
Հաշվետվության պատրաստում և ներկայացում	2025 նոյեմբեր-դեկտեմբեր

2. Երիտասարդ դեսպանների ծրագիր		
Լիազոր մարմինը		Մեծամորի համայնքապետարան
Լիազոր մարմնի պատասխանատու անձը , պաշտոնը, վարչությունը, էլ. հասցե, հեռախոսահամարը		Համայնքի ղեկավարի առաջին տեղակալ՝ Էդգար Հովհաննիսյան edgarhovhannisyan26@mail.ru, 077 626212
Այլ շահագրգիռ մարմիններ	Այլ շահագրգիռ մարմիններ/բաժիններ	Մեծամորի համայնքապետարանի աշխատակազմ, քարտուղարության, անձնակազմի կառավարման և տեղեկատվական տեխնոլոգիաների բաժին սոցիալական աջակցության, առողջապահության

		հարցերի բաժին
	Քաղաքացիական հասարակություն, մասնավոր հատված	Քաղաքացիական հասարակության կազմակերպություններ, Արմավիրի Զարգացման Կենտրոն ՀԿ, Ընտանիք և համայնք ՀԿ, Երիտասարդական Խորհրդարան ՀԿ Հույսի Մեծամոր ՀԿ
Կարգավորման ենթակա խնդիրը և հիմնական նպատակը		Երիտասարդների խնդիրներն առավել ցայտուն են Հայաստանի մարզերում, որտեղ զգալի տարբերություն գոյություն ունի մարզերում և մայրաքաղաքում ապրող երիտասարդներին հասանելի տեղեկատվության և հնարավորությունների միջև: Մարզերում ապրող երիտասարդների հնարավորությունները զգալիորեն պակաս են կրթության, աշխատանք գտնելու, ազատ ժամանցի, ինքնարտահայտման և տարբեր ծրագրերի մասնակցելու հարցերում: Համայնքում հուսալքված ու պասիվ երիտասարդներ ունենալու ամենավատ հետևանքը համայնքը լքելն է՝ մեկնելով մեծ քաղաքներ և երկրներ, ինչը լուրջ խոչընդոտ է դառնում համայնքի բնակավայրերի զարգացման համար: Երիտասարդ դեսպանների ծրագիրը հնարավորություն է, որը կապ կստեղծի համայնքի տարբեր բնակավայրերի երիտասարդների, համայնքապետարանի, համայնքային ակտիվ կազմակերպությունների միջև՝ խրախուսելով նրանց մասնակցությունը համայնքի կյանքին և զարգացմանը: Հանձնառության հիմնական նպատակը կարողությունների, առաջնորդական հմտությունների զարգացման, քաղաքացիական ակտիվության միջոցով երիտասարդների մասնակցության խթանումն է տեղական ինքնակառավարմանը:
Պարտավորության հակիրճ նկարագրությունը		Հանձնառությունը երիտասարդական դեսպանների ցանցի ստեղծումն է 30 գյուղական բնակավայրերից և Մեծամոր քաղաքից՝ իրենց համայնքում որպես երիտասարդ դեսպաններ հանդես գալու նպատակով: Երիտասարդ դեսպանները կմասնակցեն համայնքապետարանի կողմից կազմակերպված

	միջոցառումներին, կամավորական աշխատանքներին, ներգրավված կլինեն տեղական երիտասարդական քաղաքականության մշակման գործընթացին, հանդես կգան համայնքում ԲԿԳ սկզբունքերի ջատագովներ: Համայնքապետարանը նաև հետազոտություն կանցկացնի քաղաքային և գյուղական բնակավայրերում երիտասարդության կարիքները, ժողովրդագրական բաշխվածությունը և մասնակցության մակարդակը գնահատելու համար: Ծրագիրը կունենա կարողությունների զարգացում և առաջնորդության բաղադրիչներ, աջակցություն քաղաքականության մշակմանը և երիտասարդներին քաղաքապետարանի աշխատանքին ծանոթացնելու համար:
ԲԿԳ ո՞ր մարտահրավերից է բխում պարտավորությունը	Թափանցիկություն Հաշվետվողականություն Մասնակցություն Ինովացիա
Համապատասխանությունը ԲԿԳ արժեքներին	Մասնակցություն
Կայուն զարգացման ո՞ր նպատակների կամ թիրախների իրականացմանն է աջակցում	11. Կայուն քաղաքներ և համայնքներ

Ընթացիկ գործողություններ	
1. Համայնքապետարանի կողմից իրազեկում երիտասարդ դեսպաններ ծրագրի մասին, հայտարարության տեղադրում, երիտասարդ դեսպանների ծրագրի հայտի կազմում, մասնակիցների ընտրություն և ցանցի կազմում	2025 մարտ
2. Մեծամոր համայնքի դպրոցների, վարչական ղեկավարների, կրթության, մշակույթի, սպորտի և երիտասարդության հարցերի բաժնի համագործակցությամբ, համայնքային ՀԿ-ների համագործակցությամբ երիտասարդ դեսպանների ցանցի ստեղծում, հանդիպում համայնքապետարանում և ծանոթացում ծրագրին	2025 ապրիլ
3. Երիտասարդ դեսպանների վերապատրաստում առաջնորդության, մասնակցայնության, համայնքում առկա մասնակցային մեխանիզմների վերաբերյալ	2025 ապրիլ-մայիս
4. Երիտասարդ դեսպանների ցանցի միջոցով մասնակցային գործընթացների վերաբերյալ	2025 ապրիլ-մայիս (մասնակցային

տարածում Մեծամոր քաղաքում և գյուղական բնակավայրերում	բյուջետավորման իրականացման փուլում) 2025 ապրիլ-2026 հոկտեմբեր
5. Երիտասարդ դեսպանների ներգրավում համայնքային մշակութային և սպորտային միջոցառումների կամավորական աշխատանքներին (օր.՝ փառատոններ, սպորտային, առողջ ապրելակերպի մասսայականացմանը ուղղված միջոցառումներ և այլն)	2025 ապրիլ- 2026 հոկտեմբեր
6. Երիտասարդների մասնակցության ավարտական համաժողովի կազմակերպում՝ տարվա լավագույն դեսպան, լավագույն համայնքային նախաձեռնություն, նորարար գաղափար և այլ մրցանակային կատեգորիաներով	2025 դեկտեմբեր
7. Ձևավորել համայնքի ղեկավարին կից կանանց եվ երիտասարդների խորհրդակցական մարմին, սահմանել գործառույթները՝ ելնելով նաև ԲԿԳ ռազմավարական տեսլականից, և խթանել երիտասարդ դեսպանների անդամակցությունը խորհրդակցական մարմնին	2026 փետրվար-մարտ
8. Տեղական երիտասարդական քաղաքականություն լրամշակում Մեծամորի համայնքապետարանի, երիտասարդական կազմակերպությունների, երիտասարդության կենտրոնների և համայնքի երիտասարդների, երիտասարդ դեսպանների հետ համագործակցությամբ և մասնակցության սկզբունքների պահպանմամբ:	2026 հունվար- դեկտեմբեր

Աշխատակազմի քարտուղար Մ. Հովհաննիսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամոր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Մեծամոր, 060656505 info@mecamor.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

31 հունվարի 2025 թվականի N 12-Ա

ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՓՇԱՏԱՎԱՆ ԳՅՈՒՂՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ 0,001874 ՀԱ, 0,003999 ՀԱ ԵՎ 0,0201 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՆԵՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆԸ ՆՎԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 56-րդ հոդվածի 5-րդ կետով, 63-րդ և 89 րդ հոդվածներով և «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ և կետով և հիմք ընդունելով Մեծամոր համայնքի ղեկավարի առաջարկությունը՝

ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1.Մեծամոր համայնքի սեփականությունը հանդիսացող Մեծամոր համայնքի Փշատավան գյուղի 1-ին փողոց 19-րդ փողոց 13/1 հասցեում գտնվող՝ 04-095-0071-0014 կադաստրային ծածկագրով 0,001874 հա, 19-րդ փողոց 13/2 հասցեում գտնվող՝ 04-095-0071-0021 կադաստրային ծածկագրով 0,003999 հա և 1-ին փողոց 40/7 հասցեում գտնվող՝ 04-095-0071-0022 կադաստրային ծածկագրով 0,0201 հա բնակավայրերի հասարակական կառուցապատման հողամասերը նվիրել Հայաստանի Հանրապետությանը՝ Մեծամոր համայնքի ավագանու 2024 թվականի մարտի 15-ի N35-Ա որոշմամբ մանկապարտեզ կառուցելու համար Հայաստանի Հանրապետությանը նվիրաբերած հողամասը ընդլայնելու նպատակով :

2. Համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում ձեռնարկել սույն որոշումից բխող գործառույթների իրականացումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ -17 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՎԱՀՐԱՄ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԷԴԳԱՐ

ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ՌԱԶՄԻԿ

ԱՀԱՐՈՆՅԱՆ ՍԵՐԳԵՅ

ԱՍԱՏՐՅԱՆ ԷԴԳԱՐ

ԲԱՐԵՂԱՄՅԱՆ ԱՇՈՏ

ԴՈԲՈՅԱՆ ՏԱՏՅԱՆԱ

ԵՐՎԱՆԴՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ

ԶԱՔԱՐՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԳԱՅԱՆԵ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱՀԱՊԵՏ

ՄԱԿՅԱՆ ՄԱՐԳԱՐԻՏԱ

ՄԱՅԱԿՅԱՆ ՏՈՆԻԿ

ՄԽԻԹԱՐՅԱՆ ԱՐԱՄԱՅԻՍ

ՇՄԱՎՈՆՅԱՆ ԱՐՄԵՆ

ՍԱՐԳՍՅԱՆ ՎԱՐԴԳԵՍ

ՍՆՋՈՅԱՆ ԱՐՏՅՈՄ

Համայնքի ղեկավար՝ ՎԱՀՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆ